Արձանագրություն N 5

ՀԾԿՀ-20/2-ԳՀԱՊՁԲ ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման միջոցով համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

2 դեկտեմբերի 2019թ.
ժամը 11:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լիլիթ Մկրտչյանը, անդամներ՝ Ջուլիետա Բաբայանը, Մեսրոպ Ղարիբյանը, Անուշ Սմբատյանը և քարտուղար՝ Էդգար Շադյանը, բացակայում էր Արսեն Թերզիկյանը:

Օրակարգ

Հայտերի գնահատման, անհամապատասխանությունների շտկման և գների նվազեցման բանակցությունների վերաբերյալ

ՀԾԿՀ-20/2-ԳՀԱՊՁԲ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լիլիթ Մկրտչյանը նիստը հայտարարեց բացված:

Գների նվազեցման բանակցություններին ներկա են գտնվել «Նովա Թրեյդ» և «Կոմպմարկետ» ՍՊԸ-ները, բացակայում էին «Պատրոն ՌՄ» և «Զորավար Սեպուհ և որդիներ» ՍՊԸ-ները:

Վերոնշյալ կազմակերպությունների հետ բանակցությունները հանգեցրել են գների նվազեցման 5-րդ, 16-րդ և 21-րդ չափաբաժինների մասով:

Հաշվի առնելով վերոգրյալը հանձնաժողովը քննարկեց և որոշեց.

1. **Իրականացնել ներկայացված հայտերի գնահատում, որի արդյունքում հանձնաժողովը որոշեց՝**

«Նովա Թրեյդ» ՍՊԸ-ին՝

- ընտրված մասնակից ճանաչել 5-րդ և 16-րդ չափաբաժինների մասով:

«Կոմպմարկետ» ՍՊԸ-ին՝

- ընտրված մասնակից ճանաչել 21-րդ չափաբաժնի մասով:

2. **Գնման գործընթացը հայտարարել չկայացած՝ 6-րդ, 9-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ և 20-րդ չափաբաժինները:**

3. **«Զորավար Սեպուհ և որդիներ» ՍՊԸ-ի հայտում արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում ընկերության կողմից չեն շտկվել:**

26.11.2019թ. Հանձնաժողովը հայտերի բացման նիստը կասեցրել է՝ ծանուցելով «Զորավար Սեպուհ և որդիներ» ՍՊԸ-ին՝ շտկելու արձանագրված անհամապատասխանությունը (այն է՝ հավելված 1.1–ի տեխնիկական բնութագրում ներառված է «կամ համարժեքը» բառերը և հստակեցնել ապրանքի ամբողջական նկարագիրը): Ընկերությունը սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը, սակայն այն չի հաստատել էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ուստի հայտերի բացման նիստը ևս 1 օրով կասեցվել է և ընկերությանը ծանուցվել, որպեսզի վերջինս այն հաստատի էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Ընկերությունը սահմանված ժամկետում

ներկայացրել է ոչ միայն հավելված 1.1-ը, այլ նաև գնային առաջարկը, այդ թվում՝ անճշտություններով: Հաշվի առնելով նշվածը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 19-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշեց մերժել «Զորավար Սեպուհ և որդիներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և դիմել լիազոր մարմնին՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ընդգրկելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

4. **Ընտրված մասնակից ճանաչված կազմակերպությունների հետ հրավերով սահմանված ժամկետում կնքել պայմանագրեր:**

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0, բացակայում էր 1:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Լիլիթ Մկրտչյան

անդամներ _____ Ջուլիետա Բաբայան

_____ Մեսրոպ Ղարիբյան

_____ Անուշ Սմբատյան

քարտուղար _____ Էդգար Շադյան